



Գրիգոր Զոհրապ

Զմարադտա

Ա

Երբոր կարգը իրեն եկավ բան մը պատմելու, բարեկամս Էլմասյան, հարուստ ու գեղեցիկ երիտասարդ մը, որուն սիրային արկածները շատ գրուցված են Փերայի մեջ, այսպես խոսեցավ:

Գեղջուկ սովորություն մըն էր այն հույն սպասուհիին աղվորությունը, որ անցյալ տարի մեր տունն էր:

Մեր փողոցին մեջ, ուր սպասուհիները կվխտան, մեկ հատիկ էր ինքը. բոլոր խոհարարներուն, ծառաներուն ու նպարավաճառի տղոց երազած աննման աղջիկը:

Անցորդները կկենային զինքը դիտելու համար, երբոր շաբաթ առ-տունները, մերկոտն ու վար ծռած, դրան սեմի, քարերը մաքրելու կգբա-ղեր՝ ինչպես որ սովորություն էր մեր տանը մեջ:

Այս շինականի ոտքերը պզտիկությամբ կան փափկությամբ չէին կրնար պարծենալ հարկավ. բայց իրենց աշխատասեր բրտությանը մեջ աղվոր գիծերու ու վարդ գարշապարի մը շնորհը ունեին:

Այո դիրքով՝ արձակված ոսկի մագերուն հարուստ խուրճը, հրդեհի մը պես, իր պարանոցին ճերմակությունը կ'այրեր ու երկու կողմեն վար կթափեր:

Խաժ աչքերը, հակառակ իր գեղացիի անթխած նայվածքին, կամ թերևս ասորի համար, թովիչ բան մը ունեին երբոր հառեին վրադ, սաստիկ, զգլխիչ բուրումի մը պես որ կփակչի քեզի և ուրկե չես կրնար և չես ուզեր փախչիլ:

Ամենքը կարծեցին, որ կրցա իր շնորհները վայելեր. սխալեցան:

Չմարադտան չհաճեցավ երեսս նայիլ. սակավախոս աղջիկ մըն էր, ինչպես կ'ըլլան անոնք որոնց ույժը իրենց լուռությանը մեջն է:

Օր մը սակայն վրա հասա երբոր կեսգիշերին, դրան մոտ կսիրա-բաներ մեկու մը հետ. ուզեցի իմ բախտավոր ոսոխս ճանչնալ. այնպես մը շարժեցա որ չկրցավ անհկա խույս տալ, առանց դեմ դեմի գալու ինձի հետ. իմ ախտյանս պարզապես անկյունի մսավաճառի մանչն էր. քսան տարեկան անշահ տղա մը, աղտոտ, յուղոտ, միսի, ճարպի հո-տերով ծեփված գանելիք մը:

Ինձի տեսնելուն՝ Չմարադտան պահվրտեցավ, բայց միտքս դրի այս ախտավարակ հաճույքին գաղտնիքը հասկնա. գիտեք որ կանացի հոգեբանությունը իմ մեծագույն զվարճալիքս է. անծանոթ, անմատչելի բևեռն է ան, որ Հյուսիսինեն ա՛լ ավելի համառությամբ կպահե իր թա-քուն հրաշալիքները:

Հաշորդ օրը կանչեցի Չմարադտան իմ սենյակս, կարծեց որ բան մը պիտի ապսպրեմ ու վազեց եկավ. այն ատեն նստեցուցի գինքը դե-մս, բռնի, աթոռի մը վրա, հանցավորի մը պես՝ որուն դատավորը կ'են-թաղրեի ինքզինքս այդ վայրկյանին:

Ապշությամբ երեսս կնայեր ու քիչ մըն ալ՝ կ'ըմբռներ որ առջի գիշերվան հանդիպումը իմ հանդիսավոր ձևերուս հետ կապակցություն մը ունենալու էր:

Բ

Ու երբ տեսա գինքը այսպես մինակը.

- Աղջիկս,- ըսի անոր,- չեմ կրնար պահանջել որ գիլ, հաճելի գտնես անպատճառ. ճաշակները կտարբերին. բայը հետաքրքիր եմ քու ըմբռնումդ

հասկնալու. դո՛ւն, այդչափ շնորհալի մեկը, ի՞նչպես երեկ գիշերվան անշնորհք
Էակին սիրտ կու տաս:

Մտիկ ըրավ ինձի. իր դենքին վրա գծագրված անձկությունը անհետացավ
տակավ, և անփույթ, գրեթե անպատկառ ձևով մը պատասխանեց.

- Դուն,– ըսավ ինձի, – իրավ անկուշտ Էակն ես եղեր. հարուստի, չտեսի,
չհափրացողի տիպարն ես. ի՞նչ պետք ունիս հարցնելու իմ պատճառներս.
անոնք չնչին ու անհասկնալի պիտի երևան քեզի. ինձի համար նվիրական են:

Ո՞վ ես դուն որ ինձի պես խեղճ ու աղքատ աղջիկ մը կհետապընդես. կպակսի՞ն
քեզ սիրողներ. չե՞մ տեսներ ամեն օր սենյակիդ մեջ լուսանկարները բազմաթիվ
սիրուհիներուդ, որոնք հոն իրար կգտնեն առանց իրար ճանչցած ըլլալու.
տիկիներն ու վարձկաններ, ամեն տեսուկեն ալ ունիս. ոչինչ կպակսի քեզի:

Բախտը քեզի ամեն վայելքը լիուլի շոայլեր է անիրավ առատաձեռնությամբը, և
ատիկա՝ ուրիշներու գրկանքովը շինված է:

Այն հեք պատանին, որ իր աշկերտի աղտոտ ու բիրտ գրգլյակին վրա կպտտցնե
խանութին բոլոր թանձրացած հոտերը, իբր թե իր դժ–բախտ ճակատագիրը
տաներ հետը ամեն տեղ, օրն ի բուն ամեննն նկուն աշխատության մը
դատապարտյալն է. իր տաժանքին փոխարեն ստա–ցած չնչին ու ողորմելի
ամսական վարձքը, հայրենի՛քը, հո՛ն, հեռո՛ւն, այս բանը դուն չես գիտեր,
սպասող հոր մը, մոր մը վերջին տարիներու գրկանքը թեթևցնելու պիտի երթա.
այդ ամսականը քու մեկ վայրկյա–նի հաճույքիդ գինն է: Հո՛ւ, իր երկրեն
անջատված, նետված այդ տղան՝ ի՞նչ ունի գինքը շրջապատող այս մեծ
մայրաքաղաքին ի հանդես բե–րած վայելքներեն: Անիկա գ՛իս գտավ միայն
վիճակակից մը իրեն, գիս որ իր ազատ տարիներուն տառապանքին գիտակիցն
են. իր բա–րեկանուհին եղա, չեմ պահեր քննե. այդ գեղջուկ տղան ձեր
մայրաքաղաքեն բան մը չգողցավ, բան մը չպակսեցուց ձեր վայելքի իրա–վունքն
երեն. տիկիները ձերն են ու ձերը թող ըլլան, բայց գեղջուկ աղ–ջիկը իրն է ու իրը
պետք է որ մնա:

Հետզհետե, քանի որ կխոսեր, Ջնարադտային այտերը կարմրեր էին. վերջի
բառերուն՝ ոտքի ելեր էր. իր սրտմտած աղվորությունը, սրտաբուխ
պերճախոսությամբը բոլորովին հմայող բան մը դարձեր էր. վեա ու
ամբարտավան դիրքով մը կանգներ էր դեմս, ասպարեզ կարդալով կարծես
ինձի՝ որ իր խոսքերուն ունկնդրելե ավելի լանջքին հարույցքը կդիտեի: Եվ
հաղթված ընկճված իր դեմը, հիմակ ա՛լ ավելի գայրագին իղձով մը լեցվեր էի.
հլու, քամակս ծռած իր դիմացը, և պաղատագին ձևով մը՝ իբր ճշմարիտ
քաղաքացի, անմիտ ու թուլ արարած, փոխանակ վիճելու հետը՝ մոտենալ ուզեցի
իրեն. բիրտ ույժով մը ետ հրեց իրեն կարկառվող ձեռքերս՝ աղտոտ ու գարշ բանի
մը հպումը արգիլելու պես, և դուրս փախալ:

1898